

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ  
2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 248-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ մասի և ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 1073-Ն որոշման պահանջներին համապատասխան ՀՀ կենտրոնական բանկը (այսուհետև՝ Բանկ) ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել Բանկի խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 28-ի N 248-Ա որոշմամբ հաստատված Բանկի 2011 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը՝ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «Ժբ2» կետի պահանջի համաձայն սույն եզրակացությունը տրվում է Բանկի կողմից ներկայացված՝ վերը նշված փաստաթղթերի վերաբերյալ:

**Ա. Վարչական ծախսերի նախահաշվի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ**

1. Ըստ Բանկի 2011 թվականի վարչական ծախսերի նախահաշվի (այսուհետև՝ Նախահաշիվ), 2011 թվականին Բանկի վարչական ծախսերը կկազմեն 5,412.6 մլն դրամ, որը գերազանցում է 2010 թվականի համար «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝ Օրենք) հաստատված համապատասխան ցուցանիշը 9.9%-ով կամ 489.2 մլն դրամով, որի հիմնական մասը՝ 97.4%-ը կամ 476.4 մլն դրամը բաժին է ընկնում Բանկի ապարատի պահպանման ծախսերին:

2. Ըստ Նախահաշվի, 2011 թվականին Բանկի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել են 5,181.3 մլն դրամ, որը գերազանցում է Օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշը 10.1%-ով կամ 476.4 մլն դրամով: Բանկի ապարատի պահպանման 2011 թվականի ծախսերի 89.5%-ը (2010 թվականի՝ 89.7%-ի դիմաց) կամ 4,639.0 մլն դրամը բաժին է ընկնում Բանկի աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ պարգևատրումը և նյութական խրախուսումը), պարտադիր սոցիալական ապահովության վճարների և սոցիալական ապահովության

գծով ծախսերին, որը գերազանցում է նույն ցուցանիշի գծով 2010 թվականի համար Բանկի կողմից նախատեսված 4,220.9 մլն դրամը 9.9%-ով կամ 418.1 մլն դրամով:

2.1. Բանկի աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ աշխատավարձին հավասարեցված միջոցների) գծով ծախսերը Օրենքով հաստատվել են 3,580.9 մլն դրամ, որի դիմաց, ըստ Բանկի կողմից ներկայացված Մեկնաբանության (այսուհետև՝ Մեկնաբանություն), 2011 թվականին նախատեսվել է 3,946.0 մլն դրամ (365.1 մլն դրամ կամ 10.2% աճով): Մեկնաբանության համաձայն Բանկի աշխատակիցների աշխատավարձի և նրան հավասարեցված միջոցների հաշվարկը կատարվել է՝ ելնելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետի «գ» ենթակետի պահանջներից, համաձայն որի Բանկի աշխատակիցների աշխատավարձի միջինը պետք է համապատասխանի ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձին: Պլանավորումը կատարվել է համաձայն Բանկի ծախսերի նախահաշվի ձեռնարկի, հաշվի առնելով Բանկի աշխատակիցների գործող հաստիքացուցակը և նոր գործառույթների ավելացման հետ կապված դրանում ակնկալվող աճը, ինչպես նաև աշխատակիցների առաջիկա դացման գործող կանոններին համապատասխան 2010 թվականի համար սահմանված աշխատավարձի աճը, հանգստյան և տոնական օրերին վճարվելիք գումարները: Աշխատակիցների քանակի ավելացումը կապված է ՀՀ կենտրոնական բանկի գործառույթների ավելացման հետ՝ ուղղված ՀՀ-ում ֆինանսական կայունության, փողերի լվացման դեմ պայքարի ապահովմանը, ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության և ակտուարների ինստիտուտների կայացմանը, ինչպես նաև 2010 թվականին «Սյունիքի» ՏԴԿ-ի և 2010 թվականին ՀՀ կենտրոնական բանկի 3-րդ մասնաշենքի շահագործման հանձնմամբ պայմանավորված աշխատակիցների և սպասարկող անձնակազմի ընդունման հետ: Աշխատավարձի 2011 թվականի հաշվարկը կատարվել է 750 աշխատակցի հաշվով (2010 թվականի համար նախատեսված 710 աշխատակցի դիմաց)՝ 438.4 հազ. դրամ աշխատավարձով, որը, ըստ Մեկնաբանության, զիջում է 2011 թվականի համար ՀՀ առևտրային բանկերի կողմից կանխատեսվող ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձի 505 հազ. դրամը: Այս հոդվածով 2011 թվականի համար նախատեսված գումարի 10.2% աճը 2010 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է Բանկի աշխատակիցների քանակի և Բանկի միջին աշխատավարձի աճի հետ (վերջինս 2010 թվականի համար նախատեսված նույն ցուցանիշը գերազանցում է 17.4 հազ. դրամով կամ 4.1%-ով):

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների և սոցիալական ապահովության այլ ծախսերի գծով Նախահաշվով նախատեսված 693.0 մլն դրամից 361.0 մլն դրամը (2010 թվականի

330.0 մլն դրամի դիմաց) ծրագրվել է պարտադիր սոցիալական ապահովության վճարները կատարելու, իսկ 332.0 մլն դրամը՝ Բանկի աշխատակիցների առողջության ապահովման և այլ ծախսերը հոգալու համար (2010 թվականի 310.0 մլն դրամի դիմաց):

2.2. Ռազմավարական խնդիրների իրականացման գործում կարևորելով անձնակազմի վերապատրաստումը՝ 2011 թվականին Բանկը կշարունակի ապահովել իր աշխատակիցների մասնակցությունը վերապատրաստման ծրագրերին, ուսուցողական և փորձի ուսումնասիրման այցերին: Ըստ Մեկնաբանության, 2011 թվականին նախատեսվող գործուղումների քանակը կրճատվել է, հաշվի առնելով գործուղումների թանկացումը, կապված՝ ավիատոմսերի գների աճի հետ: Այնուամենայնիվ, 2011 թվականին գործուղման ծախսերը (ներառյալ անձնակազմի ուսուցման և վերապատրաստման ծախսերը) նախատեսվում են 411.6 մլն դրամի չափով, որը 2010 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշը գերազանցում է 41.6 մլն դրամով կամ 11.2%-ով:

2.3. Բանկի 2011 թվականի ներկայացուցչական ծախսերը ծրագրվել են 54.0 մլն դրամ, որը 2010 թվականի համար նախատեսված նույն ցուցանիշից ավելի է 6.4 մլն դրամով կամ 13.4%-ով: Ըստ Մեկնաբանության, 2011 թվականին նախատեսվում է մի շարք միջազգային պատվիրակությունների ընդունելությունների կազմակերպում և միջազգային ձևաչափի սեմինար-դասընթացների, ինչպես նաև Էզմոնտ խմբի լիազումար նիստի անցկացում Հայաստանի Հանրապետությունում:

2.4. Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման և սպասարկման 2011 թվականի ծախսերը նախատեսվել են 76.8 մլն դրամի չափով, որը Օրենքով հաստատված մակարդակը գերազանցում է 10.3 մլն դրամով կամ 15.5%-ով: Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերի հաշվարկները կատարվել են շահագործվող 26 ավտոմեքենայի համար՝ հիմք ընդունելով 2010 թվականին Բանկի կողմից վառելիքի ձեռքբերման և ավտոմեքենաների տեխսպասարկման համար կնքված պայմանագրերը:

3. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսերը 2011 թվականին կկազմեն 65.4 մլն դրամ, որը 12.5%-ով կամ 7.3 մլն դրամով գերազանցում է 2010 թվականի համար նախատեսված համապատասխան ցուցանիշը:

4. Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված 2011 թվականի ծախսերը, որոնք ներառում են Բանկի շենքի մաքրության և բնականոն գործունեության ապահովման, էլեկտրասարքավորումների վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի

ձեռքբերումը և արխիվի կարգավորումը, Բանկի կողմից նախատեսվում են 87.9 մլն դրամի չափով, որը 4.5 մլն դրամով կամ 5.3%-ով ավելի է 2010 թվականի համար նախատեսված գումարից:

5. 2011 թվականի ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը նախատեսվում են 63.0 մլն դրամ, որը 2010 թվականի ծրագրային նույն ցուցանիշից ավելի է 1.1 մլն դրամով կամ 1.8%-ով, որը պայմանավորված է թվով 4 հատ բջջային հեռախոսների և «Սյունիքի» ՏԴԿ-ի թվով 2 հատ հեռախոսագծերի ավելացման հետ:

6. Չնախատեսված ծախսերը, ինչպես և 2010 թվականի նախահաշվում, 2011 թվականի համար ծրագրվել են 15.0 մլն դրամի չափով:

### **Բ. Կապիտալ ներդրումների ծրագրի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ**

Բանկի կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը 2011 թվականի համար Բանկի կողմից առաջարկվում է սահմանել 24,203,2 մլն դրամի չափով, որը «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշից ավելի է 1,970.2 մլն դրամով կամ 8.9%-ով: Մասնավորապես 2011 թվականի համար Բանկի կողմից նախատեսվում է ծրագրված կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակի.

ա) 46.7%-ը կամ 11.3 մլրդ դրամն ուղղել այլ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ներդրմանը, այդ թվում՝

- «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈԻՎԿ-ի մասով՝ 8.0 մլրդ դրամ,
- «Հայինկասացիա» ՓԲԸ-ի մասով՝ 3.1 մլրդ դրամ,
- «Արքա քարտ» ՓԲԸ-ի մասով՝ 0.2 մլրդ դրամ:

բ) 45.5%-ը կամ 11,020.0 մլն դրամն առանձնացնել Բանկի աշխատանքային շենքերի և շինությունների կառուցման և կապիտալ վերանորոգման համար: Նշված գումարը 2,130.0 մլն դրամով կամ 24%-ով գերազանցում է 2010 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշը: Նշված ծախսերի կազմում «Դիլիջան» տարածաշրջանային ֆինանսաբանկային համալիրի կառուցման համար պլանավորվել է 10,950.0 մլն դրամ, որը նախատեսվում է օգտագործել «Դիլիջան» ֆինանսաբանկային համալիրի շինարարության, վարչական շենքի կառուցման, նոր տարածքի ձեռքբերման և Բանկի աշխատակիցների կացարանների նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և կառուցման, ինչպես նաև Դիլիջանի գրադարանի վերանորոգման համար: Բանկի 3-րդ մասնաշենքում այցելուների կենտրոնի ստեղծման աշխատանքներն իրականացնելու նպատակով նախատեսվել է 70.0 մլն դրամ:

զ) 7.7%-ի կամ 1,865.2 մլն դրամի չափով գումար հատկացնել համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների, Բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ (այդ թվում՝ անվտանգության ապահովման համար) հիմնական միջոցների ձեռքբերման և կապիտալ վերանորոգման համար: Նշված գումարը 1,049.5 մլն դրամով կամ 36.0 %-ով զիջում է 2010 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշը:

Վերը նշված խումբ ծախսերի ծրագրված գումարով նախատեսվում է ձեռք բերել՝

- 1,003.2 մլն դրամի համակարգչային տեխնիկա (կազմում է այս խումբ ծախսերի 53.8%-ը): 2011 թվականի համար նախատեսված գումարը 2010 թվականի ծրագրային մակարդակը զիջում է 185.3 մլն դրամով կամ 15.6 %-ով,

- 795.2 մլն դրամի էմիսիոն և կանխիկ դրամով գործառնությունների ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 42.6%-ը), 2010 թվականի ծրագրային մակարդակը զիջում է 369.6 մլն դրամով կամ 31.7%-ով,

- 48.9 մլն դրամի գրասենյակային գույք, կապի միջոցներ և Բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 2.6%-ը), 2010 թվականի ծրագրային մակարդակից պակաս է 493.4 մլն դրամով կամ 11.1 անգամ, նշված էական տարբերությունը պայմանավորված է հետևյալով. 2010 թվականի կապիտալ ներդրումների ծրագրով նախատեսված է անհրաժեշտ գույքի ձեռք բերում՝ 2010 թվականին շահագործման հանձնվող Բանկի 3-րդ մասնաշենքի, «Սյունիքի» և «Վանաձորի» ՏԴԿ-ների համար:

- 17.9 մլն դրամի անվտանգության ապահովման համար հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 1.0%-ը), 2010 թվականի ծրագրային մակարդակից պակաս է 1.2 մլն դրամով կամ 6.4%-ով:

դ) 1.0%-ը կամ 18.0 մլն դրամը (2010 թվականի ծրագրային մակարդակից պակաս է 10.3 մլն դրամով կամ 36.4%-ով) հատկացնել վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրմանը՝ Բանկի Hyundai Bus մակնիշի ավտոբուսը նորով փոխարինելու համար:

Հարկ է նշել նաև, որ թեև Բանկի կապիտալ ներդրումների 2011 թվականի սահմանաչափի 8.9% ավելացումը Օրենքով հաստատվածի նկատմամբ Բանկի 2011 թվականի գործունեության արդյունքների վրա ուղղակի ազդեցություն չի ունենա, սակայն, դրա անուղղակի ազդեցությունն առկա է: Այսպես, Բանկի 2011 թվականին վերը նշված ծավալով կապիտալ ներդրումների կատարումն կհանգեցնի ամորտիզացիոն հատկացումների ծավալի և Բանկի 2011 թվականի գործառնական ծախսերի ավելացմանը և հետևաբար նույն չափով նաև Բանկի 2011 թվականի գործունեության արդյունքում առաջացող վնասի գումարի ավելացմանը:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ Բանկի ծախսերի 2011 թվականի Նախահաշվով և կապիտալ ներդրումների ծրագիրով նախատեսված ծախսերի ուղղություններն ու ծավալները հնարավորություն կընձեռեն Բանկին ապահովելու իր բնական գործունեությունն ու կարողությունների զարգացումը: Դրա հետ մեկտեղ, նկատի ունենալով Բանկի վերջին տարիների գործունեության տարեկան արդյունքներով ստացված փաստացի, ինչպես նաև առաջիկա տարիների արդյունքներով Բանկի կողմից ակնկալվող վնասը և Բանկի պահուստների նվազման միտումը, նպատակահարմար ենք գտնում առաջարկել Բանկին մեկ անգամ ևս քննարկել Բանկի 2011 թվականի առաջարկվող ծախսերը, դրանց ծավալը հնարավորինս կրճատելու նկատառումով: